ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/1-1

ք.Սևան « 18 » Փետրվարի 2022թ.

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Կարապետյանի, որը գործում է ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վաղինակ Հարությունյանի, որը գործում է «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <u>խոհանոցի վերանորոգման աշխատանքները</u> (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <u>16 շաբաթ</u>:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[271]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:[282]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 18720000 /տասնութ միլիոն յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, որից 3120000 /երեք միլիոն հարյուր քսան հազար/ ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է փվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև փվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[324]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ	«Հարությունյան Շին» ՍՊԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68	ք. Երևան, Գերցենի 9
0261-2-41-73	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան"	ՀՀ 1150010165485449
մասնաճյուղ	ՀՎՀՀ 01012067
16034026004300	Տնօրեն՝
08601459	Վ. Հարությունյան
Դավիթ Կարապետյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 18 » Փետրվարի 2022թ. կնքված
ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի խոհանոցի վերանորոգման աշխատանքներ

Ծավալաթերթ-նախահաշիվ

<<	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը / հազար դրամ /	Ընդհանուր արժեքը / հազար դրամ /
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Պատերի և շեպերի գաջե սվաղի քանդում	մ2	553	0.60	331.80
2	Կախովի առաստաղի քանդում	մ2	196.8	0.37	72.82
3	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ2	8.1	0.30	2.43
4	Խճանկարե հատակների քանդում	մ2	158.40	0.37	58.61
5	Բետոնե ձևավոր սալիկների քանդում	մ2	30.30	0.30	9.09
6	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստության	մ2	196.8	0.15	29.52
7	Միջնորմերի քանդում թեթև բետոնե բլոկներից	մ2	5.5	0.52	2.86
8	Փայտե ներքին դռների քանդում	մ2	5.1	0.75	3.83
9	Փայտե լուսամուտների քանդում առանց պատուհանագոգերի	մ2	0.900	1.50	1.35
10	Արտաքին պատերում բացվածքների իրականացում	մ2	3.000	5.24	15.72
11	Ներանցումային վահանի ապամոնտաժում	հատ	1.0	22.47	22.47
12	Ուժային վահանի ապամոնտաժում	հատ	1.0	22.47	22.47
13	Էլ.լուսավորության վահանի ապամոնտաժում	լր-զմ	1.0	29.96	29.96
14	Ուժային մալուխների ապամոնտաժում	գմ	25	2.25	56.25
15	Կերամիկական լվացարանի ապամոնտաժում	հայր	2	3.00	6.00
16	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հատ	1	3.00	3.00
17	Օդափոխության համակարգի ապամոնտաժում	մ2	42	1.50	63.00
18	Պողպատյա խողովակների ապամոնտաժում ձևավոր մասերի հետ միասին Մ15-40	գմ	8.0	0.75	6.00

19	Շին աղբի մաքրում, շենքից դուրս բերում, բարձում և տեղափոխում 3կմ	տն	61	0.75	45.75
	Ընդամենը 1				782.92
	Ընդամենը 1		%		5.019
	Բացվածքներ				
1	Բացվածքների փակում թեթև բետոնե բլոկներով 400x200x100	մ2	13.5	2.02	27.27
2	Մ/պլ,սպիտակ, խուլ դռան տեղադրում փականով և բռնակով պրոֆիլ հայկական	մ2	10.70	33.71	360.70
3	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., թափանցիկ ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող լուսամուտների տեղադրում	մ2	1.60	29.96	47.94
4	Բացվածքների ուժեղացում մետաղական էլեմնտներով	տն	0.519	74.90	38.87
5	Պողպատե անկյունակ 125x8	մ	8.4	10.86	91.22
6	Շերտապողպատ՝ 100x8	մ	3.8	3.75	14.25
7	Շվելերի վրա անցքերի բացում՝ Մ18	տեղ	12.0	0.07	0.84
8	Անցքերի շաղափում՝ Մ16	տեղ	32.0	0.75	24.00
9	Շվելեր Մ24	մ	4.2	11.24	47.21
10	Հեղյուս 16	կգ	26.4	0.97	25.61
11	Ամրան AI դասի	տ	0.01	314.59	3.15
12	Պոլիմերցեմենտային շաղախի ներարկում անցքերի մեջ	մ3	0.01	29.96	0.30
	Ընդամենը 2				681.35
	Ընդամենը 2		%		4.368
	Հարդարման աշխատանքներ Հատակներ				
1	***Հատակի ց/ա շերտի պատրաստում ամրանային ցանցով 50մմ հաստության***	***մ2***	***196.8***	3.00	590.40
2	Պրեսգրանիտե սալիկներով հատակի իրականացում սոսընձային շերտով, չսահող	մ2	196.8	5.62	1106.02
3	Պրեսգրանիտե սալիկներով շրիշակների իրականացում սոսընձային շերտով h=10սմ	մ2	7.3	7.49	54.68

	Ընդամենը 3				1751.09
	Ընդամենը 3		%		11.225
	Պատեր, Առաստաղ				
1	Պատերի սվաղ գաջե շաղախով բարելավված որակի	մ2	**304.0**	1.87	568.48
2	Դռների և լուսամուտների թեքությունների սվաղ գաջե շաղախով	մ2	**35.0**	4.49	157.15
3	Պատերի և շեպերի ծեփամածկում գիպսային և կավճային մածիկով ու ներկում բարձրորակ լատեքսային ներկով	մ2	**339**	1.87	633.93
4	Պատերի բարձրորակ ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	մ2	**229.0**	2.25	515.25
5	Պատերի երեսապատում բարձրորակ կերամիկական սալիկներով h=2մ	մ2	**165.0**	5.24	864.60
6	Պատերի երեսապատում բարձրորակ կերամիկական սալիկներով,սանհանգույցում ամբողջական	մ2	**64.0**	5.24	335.36
7	Կախովի Armstrong տիպի առաստաղի պատրաստում 60x60սմ բջիջներով մետաղական ցինկապատ կարկասով	**մ2**	**196.8**	4.49	883.63
	Ընդամենը 4				3958.40
	Ընդամենը 4		%		25.374
	Ջերմամեկուսացման աշխատանքներ				
1	Շենքի ճակատային մասերի պատում (լուսամուտներիև դռների շրջանակներ) հանքային բամբակե կոշտ սալով՝ 50մմ, խտությունը՝ 100-140 կգ/մ3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.040 Վտ/մ0/Կ, որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ2	**40.00**	4.87	194.80
2	Շենքի ճակատային մասերի ջերմամեկուսացում՝ XPS - փրփրապոլիստիրոլե սալով 50մմ, խտությունը՝ 30-40 կգ/մ3/ ջերմահաղորդականությունը՝ ≤ 0.034 Վտ/մ0/Կ, որն ամրացվում է պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով	մ2	**310.0**	2.25	697.50
3	Շենքի ճակատային մասերի /անկյուններում եւ լուսամուտների ու դռների պարագծով/ անկյունակների տեղադրում (լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով)	գմ	**40.00**	5.99	239.60
4	Պոլիմերացեմենտային հատուկ սոսնձով սվաղ ապակեթելքային ցանցով	մ2	**310.0**	2.25	697.50
5	Ճակատների ներկում	մ2	**310.0**	2.62	812.20
6	Արտաքին պատուհանագոգերի պատում ցինկապատ թիթեղով 0.55x1300x200մմ	մ2	**2**	1.87	3.74

	Ընդամենը 5				2645.34
	Ընդամենը 5		%		16.957
	Ջեռուցման և գազամատակարարման համակարգի մոնտաժային աշխատանքներ				
1	Ջեռուցման կաթսայի տեղադրում "Տուրբո" համակարգի Q=32 կվտ Արտասահմանյան արտադրության երկկոնտուրանի,մոնտաժային կոմպլեկտով	կ-տ	1	337.06	337.06
2	Ծխատար Մ100	կ-տ	1	29.96	29.96
3	Այլումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում Q=133վտ	էկմ	43	1.12	48.16
4	Այլումինե ջեռուցման մարտկոցների,Q=133վտ արժեքը,h=500մմ	հատ	150	2.62	393.00
5	Մարտկոցի օդահեռացման փական Մ15	հատ	14	1.50	21.00
6	Մարտկոցի փական կարգավորող Մ15	հատ	14	1.50	21.00
7	Մարտկոցի փակող փական Մ15	հատ	14	1.50	21.00
8	Մարտկոցի միացման և ամրացման կոմպլեկտ	կոմպ	14	1.50	21.00
9	Պոլիպրոպիլենային խողովակ, այլումինե շերտով, PN 10, d=40x5մմ ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	60	2.25	135.00
10	Պոլիպրոպիլենային խողովակ, այլումինե շերտով, PN 10, d=32x4մմ ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	28	1.87	52.36
11	Պոլիպրոպիլենային խողովակ, այլումինե շերտով, PN 10, d=25x3.25մմ ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	22	1.12	24.64
12	Պոլիպրոպիլենային խողովակ, այլումինե շերտով, PN 10, d=20x3մմ ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	52	0.75	39.00
13	Պոլիպրոպիլենային ճկվող խողովակ, այլումինե շերտով, PN 10, d=20x3մմ ձևավոր մասերի տեղադրմամբ՝ տաք հատակների համար	մ	410	1.50	615.00
14	Փայլաթիթեղ խողովակների տակ (фольга)	մ2	75	1.50	112.50
15	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր d=50-40-32-25/20	հատ	98	0.19	18.62
16	Ջերմամեկուսացում խողովակաձև ռետինե ջերմամեկուսիչով 42x13մմ	մ	10	2.25	22.50
17	Ջերմամեկուսացում խողովակաձև ռետինե ջերմամեկուսիչով 28x13մմ	մ	4	2.25	9.00
18	Պոլիպրոպիլենային խողովակների ամրացումներ	հատ	200	0.07	14.00
19	Համակարգի փորձարկում,կարգաբերում	գմ	162	0.75	121.50
20	Փական Մ40	հատ	3	3.00	9.00

21	Ֆիլտր Մ40	հատ	2	2.62	5.24
22	Դատարկման փական Մ40	հատ	1	3.00	3.00
23	Արտաքին պատի մեջ անցքի բացում	հատ	6	7.49	44.94
24	Նույնի անցքի փակում	մ3	0.1	29.96	3.00
25	Վերգետնյա խողովակաշարի մոնտաժում մետաղական խողովակներից Φ25x2.5մմ, պնևմատիկ փորձարկմամբ	մ	25	3.00	75.00
26	Վերգետնյա խողովակաշարի մոնտաժում մետաղական անկար խողովակներից Φ20x2.5մմ, պնևմատիկ փորձարկմամբ	մ	6	2.25	13.50
27	Միացում գազատարին	տեղ	1	37.45	37.45
28	Պողպատե խողովակների ձևավոր մասեր	կգ	3	11.24	33.72
29	Մետաղական ամրացման տարրեր	կգ	5	11.24	56.20
30	Գազի ազդանշանային սարքի տեղադրում	հատ	2	22.47	44.94
31	Գազի ավտոմատ անջատման կափույր Φ20մմ	մ	2	7.49	14.98
32	Գազի փական Φ20մմ	մ	2	2.25	4.50
33	Գազի ֆիլտր Φ20մմ	մ	2	3.00	6.00
34	Խողովակների լուսանկարում գամմա ճառագայթով	կար	5	2.25	11.25
35	Գազի ճկախողովակի տեղադրում Φ20մմ L-0,9մ	հատ	2	2.25	4.50
36	Համակարգի փչամաքրում	մ	31	0.75	23.25
37	Մետաղական տարրերի երկշերտ յուղաներկում	մ2	2.5	7.49	18.73
	Ընդամենը 6				2465.49
	Ընդամենը 6		%		15.804
	Օդափոխության համակարգի մոնտաժային աշխատանքներ				
1	Օդի ներածող կանալային օդամուղ L=1000մ3/ժամ, P=250Պա մոնտաժային կոմպլեկտով	կ-տ	1	97.37	97.37
2	Օդատար d=0,5մմ ցինկապատ թիթեղից, փորձարկմամբ և կարգաբերմամբ (P մինչև 1000)	մ2	85	3.75	318.75
3	Եփման սարքավորումների համար կոնաձև գլխադիրներ d=0,5մմ ցինկապատ թիթեղից, փորձարկմամբ և կարգաբերմամբ (P մինչև 1000)	մ2	10	7.49	74.90
4	Ներածման ցանց օդի հոսքի կարգավորիչ փականով 300x200	հատ	18	5.24	94.32
5	Արտածման ցանց օդի հոսքի կարգավորիչ փականով300x200	հատ	28	5.24	146.72
6	Հետադարձ փական զսպանակավոր	հատ	2	7.49	14.98

7	Աղմկախլացուցիչ	հատ	2	18.73	37.46
8	Թայմեռ	հատ	2	5.24	10.48
9	Պատի օդափոխիչ 16վտ հզորությամբ	հատ	1	13.48	13.48
10	Պոլիպրոպիլենե օդատար խողովակ 100մմ տրամագծի	մ	0.5	3.00	1.50
11	Կարգավորիչ ճաղավանդակների տեղադրում 200x200մմ	հատ	1	3.00	3.00
12	Պատի մեջ անցքի բացում	հատ	2	11.24	22.48
13	150մմ անցքի փակում	մ3	0.2	26.22	5.24
	Ընդամենը 7				840.68
	Ընդամենը 7		%		5.389
	Ջրամատակարարման և ջրահեռացման մոնտաժային աշխատանքներ				
1	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով III կարգի գրունտներում, կողալիցքով	մ3	1.26	3.00	3.78
2	Ավազի նախաշերտ h=10սմ	մ3	0.1	4.49	0.45
3	Ավազի պաշտպանիշ շերտ h=de+15սմ	մ3	0.16	5.99	0.96
4	Խրամուղու ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տոփանումով	մ3	1	3.00	3.00
5	Կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժ Φ110	գմ	29	1.50	43.50
6	Կոյուղու պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժ Φ50	գմ	24	0.75	18.00
7	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում ձևավոր մասերով սառը ջրի համար Մ25x4,2մմ	գմ	21	1.50	31.50
8	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում ձևավոր մասերով տաք ջրի համար Մ25x3,25մմ	գմ	26	1.12	29.12
9	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում ձևավոր մասերով սառը ջրի համար Մ20x3,4մմ	գմ	21	0.75	15.75
10	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում ձևավոր մասերով տաք ջրի համար Մ20x3մմ	գմ	24	0.15	3.60
11	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում՝լվացման բաքով	հատ	1	26.22	26.22
12	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	5	22.47	112.35
13	Կերամիկական լոգատաշտակների տեղադրում	հատ	1	37.45	37.45
14	Այլումինե՝ 600x600մմ չափերով լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	3	26.22	78.66

15	Հոսակի տեղադրում Մ50	հատ	5	3.75	18.75
16	Հոսակի տեղադրում Մ100	հատ	4	7.49	29.96
17	Գնդային փական Մ20	հատ	10	2.25	22.50
18	Լվացարանի ծորակ-խառնիչների իմոնտաժում	կոմպ	8	5.99	47.92
19	Ցնցուղ ծորակ-խառնիչով	կոմպ	1	12.40	12.40
20	Հրշեջ պահարան 890x700x75մմ չափերի՝ ներառյալ ճկուն խողովակը, փականը և երկու կրակմարիչները	լրակազմ	2	97.33	194.66
	Ընդամենը 8				730.53
	Ընդամենը 8		%		4.683
	Էլեկտրամատակարարման մոնտաժային աշխատանքներ				
1	Ներանցումային վահան ներառված ավտոմատ անջատիչներով	հատ	1.0	97.37	97.37
2	Պահուստային սնուցման ավտոմատ միացման պահարան թվային կառավարման բլոկով 3 մուտքի և 1 ելքի 1P64 տարբերակի 380Վ, 250Ա / ԸԹՀ/	լր-զմ	1.0	97.37	97.37
3	Լուսավորության վահանակ 24 մոդուլի /եվրոպական արտադրության/	լր-զմ	1.0	11.24	11.24
4	Ավտոմատ անջատիչ ներանցման եռաբևեռ 250Ա հոսանքի	հատ	1	41.20	41.20
5	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ, 380/220Վ 80Ա	հատ	1.0	14.98	14.98
6	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ, 380/220Վ 63Ա	հատ	1.0	5.24	5.24
7	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ, 380/220Վ 40Ա	հատ	2.0	3.75	7.50
8	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ, 380/220Վ 10Ա	հատ	5.0	2.62	13.10
9	Ավտոմատ անջատիչ միաբևեռ, 220Վ 16Ա	հատ	1.0	1.87	1.87
10	Ավտոմատ անջատիչ միաբևեռ, 220Վ 25Ա	հատ	5.0	2.25	11.25
11	Ավտոմատ անջատիչ միաբևեռ, 220Վ 40Ա	հատ	3.0	3.37	10.11
12	Դիֆերենցիալ ավտոմատ անջատիչ 220Վ Iանջ=40Ա / УЗО 30mA/	հատ	1.0	14.98	14.98
13	Մագնիսական թողարկիչ , ջեռմային ռելեով, կառավարման կոճակով , 380Վ 50Ա	հատ	1	26.22	26.22
14	Մագնիսական թողարկիչ , ջեռմային ռելեով, կառավարման կոճակով , 380Վ 32Ա	հատ	1	16.48	16.48
15	Մագնիսական թողարկիչ , ջեռմային ռելեով, կառավարման կոճակով , 380Վ 6Ա	հատ	1	14.98	14.98

16	Մալուխ մինչև 35կՎ լարման ամրացված ամրակներով 1մ մինչև 3 կգ քաշով ВВГнг-LS 5x120մմ2	մ	10	12.73	127.30
17	Մալուխ մինչև 35կՎ լարման ամրացված ամրակներով 1մ մինչև 3 կգ քաշով ВВГнг-LS 5x25մմ2	մ	25	6.74	168.50
18	Անջատիչ մեկստեղանի նորմալ տարբերակի միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220վ, 6Ա	հատ	6	1.50	9.00
19	Նույնը երկստեղանի 220Վ, 6Ա	հատ	4	1.65	6.60
20	Միաբևեռ խրոցակային վարդակ 220Վ, 6Ա հողանցման կոնտակտով տուփով	հատ	27	1.50	40.50
21	Ճյուղավորման տուփ	հատ	7.0	0.37	2.59
22	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊВг-3x4 փակ էլ.հաղորդման գծերի համար	գմ	40	0.67	26.80
23	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊВг-3x2,5 փակ էլ.հաղորդման գծերի համար	գմ	75	0.49	36.75
24	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊВг-2x2,5 փակ էլ.հաղորդման գծերի համար	գմ	185	0.30	55.50
25	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 595x595մմ,220Վ, 36վտ	հատ	32	5.99	191.68
26	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 18վտ	հատ	10	2.62	26.20
27	ՊՎՔ ճկախողովակ Φ20	մ	300	0.52	156.00
28	Ակոսների պատրաստում 50x50մմ մալուխների անցկացման համար	գմ	300	0.75	225.00
29	Ակոսների փակում գաջե շաղախով	մ2	15.0	1.50	22.50
30	Ուղղահայաց հողանցիչ պողպատե անկյունակից 50x50x5մմ	հատ	3	5.24	15.72
31	Հորիզոնական հողանցիչ շերտապողպատից 160մմ2 կտրվածքով	մ	20	4.49	89.80
32	Հորիզոնական հողանցիչ շերտապողպատից 100մմ2 կտրվածքով	մ	20	3.75	75.00
33	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում հողանցման համար	մ3	5	1.87	9.35
34	Գրունտի ետլիցք տոփանումով	մ3	5	1.87	9.35
35	Ասֆալտե ծածկույթի քանդում ներառյալ նախապատրաստական շերտերը	մ3	0.5	22.47	11.24
36	Ա/բ ծածկի տակ խճի նախապատրաստական շերտի իրականացում 17սմ հաստությամբ	մ2	5	2.25	11.25
37	Ա/բ խոշորահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ2	5	3.75	18.75
38	Ա/բ մանրահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ2	5	4.49	22.45

39	Քանդված ասֆալտի բեկորների բարձում ավտոմեքենա և տեղափոխում 13կմ	տն	1.10	2.25	2.48
	Ընդամենը 9				1744.19
	Ընդամենը 9		%		11.181
	Ընդամենը 1-9		%		100
	Ընդամենը 1-9				15600.00
	ԱԱՀ		20%		3120.00
	Ընդամենը				18720.00

** Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Գերցենի 9
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150010165485449
ՀՎՀՀ 01012067
Տնօրեն՝
Վ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 18 » Փետրվարի 2022թ. կնքված
ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Խոհանոցի վերանորոգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Խոհանոցի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից	16 շաբաթ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից	16 շաբաթ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Գերցենի 9
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150010165485449
ՀՎՀՀ 01012067
Տնօրեն՝
Վ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 18 » Փետրվարի 2022թ. կնքված
ՍՀԱԿ-ԳՀԱՇՁԲ-22/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261159/501	Խոհանոցի վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան"
մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Գերցենի 9
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150010165485449
ՀՎՀՀ 01012067
Տնօրեն՝
Վ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ